ՈԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/6 ծածկագրով շրջանակային
համաձայնագրի գրանցված բոլոր մասնակիցներին

*«ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ» ՓԲԸ-ի*

կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու **տիրիստորներ** «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպած N ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/6 ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակներում:

Գնման գործընթացին մասնակցելու համար Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Բագրատունյաց 44 հասցեով մինչև հայտերի բացման նիստի օրը՝ 2014թ. մարտի 3-ը ժամը 11:00

Հայտը , որը կազմված է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումից և գնային առաջարկից, պետք է կազմված լինի **N ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/6 ծածկագրով շրջանակային համաձայնագրի ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան**:

**Մասնակցի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:**

Շրջանակային համաձայնագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմանները բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կկազմակերպվեն միաժամանակյա բանակցություններ:

Գնային առաջարկը ներկայացվում է առարկայի մեկ միավորի համար: Գնային առաջարկը ներառում է ինքնարժեք, շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկ:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանգրի նախագիծը:

(Եթե , Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ՝ լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման կարգը և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները.

-նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերում /ծանուցմամբ/՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթին, ի կատարումն որի պահանջվում է լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները):

*Տնօրեն՝ Հ.Երեմյան*

Հավելված 1

«N ԵԷՏ-ԾՀԱՊՁԲ-14/02» ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

------------------------------------------------------------------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
------------------------------------------------------------------------------------------------ կողմից «N ԵԷՏ-ԾՀԱՊՁԲ-14/02»ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգին և ծանուցման պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

----------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ`
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:
----------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

էլեկտրոնային փոստի հասցեն է`-----------------------------------------------------------------------------------:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

-------------------------------------------------------------------------------------- ------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

_______________________________2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2

«N ԵԷՏ-ՇՀԱՊՁԲ-14/02» ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# Գ Ն Ի   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «N ԵԷՏ-ՇՀԱՊՁԲ-14/02» ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ______________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| ... | ... | | | |
| ... | ... | | | |

*3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

______________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը՝ Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

______________________20 թ.

(ամսաթիվը՝ ամիսը)

ՆԱԽԱԳԻԾ

# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ԵԷՏ-ԾՀԱՊՁԲ-14/02

ք. Երևան «-----» ---------------- 2014թ.

<<Երևանի էլեկտրատրանսպորտ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Երեմյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Գնորդ », մի կողմից, և «-----------», ի դեմս տնօրեն ----------ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### *1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը*

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրի N 2 հավելված՝ Գնման ժամանակացույցով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով՝ Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի տիրիստորներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

### *2. Մատակարարման պայմանները*

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

### *3. Կողմերի իրավունքները և պարտականությունները*

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն
պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝
Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայյամագիրը (Համաձայնագիրը).

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին և Համաձայնագրերին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում փոխանցել սույն պայմանագրով նախատեսված կանխավճարը, իսկ մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել

վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:
3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:
3.2.5 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:
**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**
3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.
3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:
3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.
3.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայյամագիրը:
3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:
3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:
**3.4 Վաճառողը պարտավոր է՝**
3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:
3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:
3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
3.4.4 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:
3.4.5 Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածներով նախատեսված որակի և N 2 հավելվածներով նախատեսված քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
3.4.6 Առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը:
3.4.7 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
3.4.10 Սույն Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:
3.4.11 Ապրանքի մատակարարումը կտրոնային եղանակով իրականացնելու դեպքում կտրոնների գործողության (վավերականության) ժամկետ սահմանել կտրոնները տրամադրելու պահից առնվազն մեկ տարի:
3.4.12 Սույն պայմանագրի կատարման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես տեղեկացնել պատվիրատուին:

*4. Ապրանքի գինը և վճարման կարգը*

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ---------- ( ------------------------- ) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
4.1.2 Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է համաձայնագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:
4.2 Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:
4.3 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով Հավելված N 3՝ նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու

վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

### *5. Ապրանքի որակը*

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

### *6. Ապրանքի հանձնումը և ընդունումը*

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է սույն պայմանագրում նշված ծավալներով և ժամկետներում:
61.1 Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության
երկու օրինակ (Հավելված N 4):
6.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:
6.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

### *7. Կողմերի պատասխանատվությունը*

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Համաձայնագրերով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:
7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:
7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:
7.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,05%-ի չափով:
7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:
7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 8. *Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)*

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### *9. Այլ պայմաններ*

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի
պարտավորությունների լրիվ կատարումը:
9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառու, մատակարարը) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար:
Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի, մատակարարի) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառուն, մատակարարը) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:
9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի
փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ:
Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման և ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի:
Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝
ա) Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.
բ) եթե դա Գնորդի գործողության կամ անգործության հետևանք չէ:
9.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
9.5 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած 4 թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
9.6 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
9.7 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

*10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| -------------------------------- | -------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 1
«-----»«-----» 2014թ.կնքված
N ԵԷՏ-ՇՀԱՊՁԲ-14/02 գնման պայմանագրի

## Հայտ
## <<Երևանի էլեկտրատրանսպորտ>>ՓԲԸ-ի կարիքների համար շրջանակային համաձայնագրերով տարբեր տեսակի տիրիստորների գնման

### Ապրանքի*

| Հ/Հ | Անվանումը | Չափի միավոր | Քանակը | Բնութագիրը | Մատակարարման վայրը և ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տիրիստոր | հատ | 90 | SF271-250-12 տեսակի տիրիստորներ արագ գործելակերպով , նախատեսված աշխատելու չեխական արտադրության Շկոդա 14TR մակնիշի տրոլեյբուսի ուժային բլոկի վրա :<br>- Կրկնվող իմպուլսային լարումը տիրիստորի փակ վիճակում և կրկնվող իմպուլսային հետադարձ լարումը-1200В (12 դաս)<br>-Գործող առավելագույն թույլատրելի հոսանքը -250A<br>-Կրկնվող իմպուլսային հետադարձ հոսանքը -35мA<br>-Տիրիստորի բաց վիճակում իմպուլ-սային լարումը -1,9В<br>-Կառավարման բացող հաստատուն լարումը -2,5 В<br>-Կառավարման բացող հաստատուն հոսանքը -250 мA<br>-Անջատման ժամանակը -40мкс<br>-Ջերմաստիճանային անցումը --60 ÷ +125C° | Հ. Հ. ք. Երևան Բագրատունյաց փ.4<br>Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո, 30 աշխատանքային օրվա ընթացքում: + |

*Ապրանքը չպետք է լինի օգտագործված:

Հավելված 2
«-----»«-----» 2014թ.կնքված
N ԵԷՏ-ՇԱՊՁԲ-14/02 գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

| հ/հ | Ապրանքի անվանումը | Ֆինանսավորման գումարը «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի 2014թ. ծախսերի նախահաշվով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | Ընդամենը |
| | | հուլիս | օգոստ. | սեպտ. | հոկտ. | նոյեմբ. | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 9 |
| 1 | Ավտոպահեստամասեր | | | | | | |

ԳՆՈՐԴ

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«-----»«-----» 2014թ. կնքված
N ԵԷՏ-ՇՀԱՊՁԲ-14/02 ծածկագրով պայմանագրի

Գնորդ

________________________________

________________________________

________________________________

հասցե________________________

հհ__________________________

________________________________

հվհհ________________________

Վաճառող

________________________________

________________________________

________________________________

հասցե________________________

հհ__________________________

________________________________

հվհհ________________________

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N___

### ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «__________» 201 թ.

Պայմանագրի անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «_____________» 201 թ.

Պայմանագրի համարը՝ _

Գնորդն, ի դեմս__________________________________________________ և Վաճառողն՝ ի դեմս________________________________________________, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_________» 201 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «__» «_________» 201 թից «__» «_________» 201 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

| Մատակարարման համառոտ նկարագիրը | Մատակարարման քանակական ցուցանիշները | Մատակարա-րումների ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույ-ցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | ------------ | ------------ | | --------- |

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

________________________________
(ստորագրություն)

Ապրանքն ընդունեց

________________________________
(ստորագրություն)

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N-------------------

ք. Երևան «----» ------------------ 2014թ.

«------------------------» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն --------------------------------- որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

### *1. Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է --------------------------------------------(այսուհետ՝ Պատվիրատու) կողմից բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված N------------------------------------ ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված տիրիստորի ձեռքբերման N-------------------------գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝---------------- (--------------------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «------------------------------» ՍՊԸ բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով Ընկերությունը հանձնարարում է «----------------------------------» ՍՊԸ բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնման գործընթացի ավարտ՝ 201----թ. ---------------------------ը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող փաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

*Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները*

Տնօրեն՝

Գլխ.հաշվապահ՝ ______________

Կ.Տ.